21 հունիսի, 2021թ.

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2021 թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների քվեարկության և արդյունքների ամփոփման գործընթացների մասին

«Ականատես» դիտորդական առաքելությունն իրականացրել է 2021 թ. հունիսի 20-ի Հայաստանի արտահերթ խորհրդարանական ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտարկում:

Առաքելության շրջանակներում ներգրավվել է 580 դիտորդ, որոնք դիտարկել են 300 ընտրատեղամաս Հայաստանի ողջ տարածքում: Ներգրավվել է նաև շրջիկ դիտորդներից բաղկացած 22 խումբ, որոնք այցելել են ընտրանքից դուրս գտնվող ավելի քան150 ընտրատեղամաս, ինչպես նաև դիտորդներ, որոնք հսկել են 33 Տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը:

2021 թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների դիտարկումն իրականացվել է պատահական ներկայացուցչական ընտրանքի հիման վրա և ներառել է ձայների զուգահեռ հաշվարկ (ՁՁՀ):

ՁՁՀ-ն հնարավորություն է տալիս վիճակագրական մեթոդների կիրառման միջոցով չափել քվեարկության օրվա գործընթացների որակը, այդ թվում՝ տեղամասերի բացումը, քվեարկությունը, փակումը և արդյունքների ամփոփումը, ինչպես նաև քվեների բաշխումը:

Թեև դիտորդությունը չի ծածկում երկրի բոլոր ընտրական տեղամասերը՝ ընտրանքի վրա հիմնված ՁՁՀ մեթոդը թույլ է տալիս խոսել ընտրական գործընթացի և ստացված արդյունքների մասին՝ համապետական մակարդակով: Այն կարող է վերահաստատել կամ հարցականի տակ դնել քվեարկության արդյունքները՝ նպաստելով ընտրությունների հրապարակված արդյունքների նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը կամ ընդհակառակը՝ վերհանելով հնարավոր խնդիրները:

«Ականատեսի» դիտարկման համաձայն քվեարկության օրն, ընդհանուր առմամբ, անցել է քաղաքացիների շահագրգիռ և ակտիվ մասնակցության պայմաններում: Գործընթացները հիմնականում իրականացվել են կազմակերպված, սահուն, առանց կոպիտ խախտումների: Այդուհանդերձ, նկատվել է որոշակի լարվածություն զգալի թվով տեղամասերում՝ հիմնականում կապված կողմնակի անձանց ներկայության, ուղղորդումների, տեղամասերում առանձին կուսակցությունների վստահված անձանց թույլատրելի քանակի գերազանցման և վերահսկելի քվեարկության դեպքերի հետ: Թեև ընտրախախտումներում նկատվել է տարբեր կուսակցությունների և դաշինքների («Պատիվ ունեմ», «Բարգավաճ Հայաստան»,

«Քաղաքացիական պայմանագիր», «Զարթոնք», Հայ ազգային կոնգրես, «Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք») ներկայացուցիչների մասնակցություն, դեպքերի ճնշող մեծամասնության պատասխանատուն եղել են «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչները:

Նախապատրաստական փուլ

Քվեարկության նախապատրաստման և տեղամասերի բացման գործընթացը հիմնականում կազմակերպվել է սահմանված ընթացակարգերին համապատասխան, առանց լուրջ խախտումների:

Ժամը 7:00-ին «Ականատեսը» դիտորդներից զեկույցներ է ստացել դիտարկված տեղամասերի 96,3%-ից:

Ընտրական տեղամասեր «Ականատեսի» դիտորդների մուտք գործելու հետ կապված գրանցվել է ժամանակավոր խոչընդոտման 1 դեպք:

Կողմնակի անձանց ներկայություն է դիտարկվել տեղամասերի 2%-ում: Տեղամասերի 99%-ում տվյալները պատշաճ կերպով ներմուծվել են, և տպվել է գրանցված ընտրողների թիվը հավաստող տեղեկանքը:

Դիտարկված ընտրատեղամասերի 99.6%-ի կահավորումն ապահովվել է քվեարկության գաղտնիությունը: Թվով 4 տեղամասում եղել են կահավորման հետ կապված խնդիրներ, որոնք մեծ մասամբ կարգավորվել են:

Դիտարկված տեղամասերի 27.5%-ն է եղել դժվարամատչելի սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների համար:

Ընտրատեղամասերի մեծ մասը բացվել է ժամանակին. 8%-ը բացվել է մինչև ժամը 8:00-ը, 9-%-ը՝ 8:01-8:10-ը ժամանակահատվածում, իսկ 1%-ը՝ 8:11-ից հետո:

Քվեարկություն

Քվեարկությունն ընդհանուր առմամբ անցել է խաղաղ, ընտրող քաղաքացիների լայն ու շահագրգիռ ներգրավման պայմաններում: Գործընթացները հիմնականում եղել են կազմակերպված և օրենքին համահունչ: Այդուհանդերձ, նկատվել է լարվածություն զգալի թվով տեղամասերում՝ հիմնականում կապված կողմնակի անձանց ներկայության, տեղամասերում առանձին կուսակցությունների վստահված անձանց թույլատրելի քանակի գերազանցման, ուղղորդումների և քվեարկության վերահսկողության դեպքերի հետ:

Քվեարկության գործընթացում նկատվել են ընտրական տեղամասերի ներսում գտնվելու իրավունք ունեցող անձանց իրավունքի խոչընդոտման դեպքեր տեղամասերի 1.33%-ում: Տեղամասային ընտրական հանձնաժողովները հիմնականում գրանցել են դիտորդների նկատած խախտումները տեղամասային գրանցամատյաններում, սակայն տեղամասերի 6.66%-ում մեկ կամ ավելի դեպքեր չեն գրանցվել: Տեղամասերի 15.6%-ում եղել է 1-3 դեպք, երբ ընտրողների

անվան դիմաց առկա է եղել այլ անձի ստորագրություն: Տեղամասերի 0.67%-ում եղել է 1-3 դեպք, երբ ստորագրություն լինելու պատճառով ընտրողին չի թույլատրվել քվեարկել:

Տեղամասերում ընտրողների գրանցման սարքավորումների հետ կապված լուրջ խնդիրներ չեն արձանագրվել: Տեղամասերի 25%-ում 1-3 դեպքում ընտրողների անունները գրանցված չեն եղել սարքավորումներում, տեղամասերի 1.33%-ում արձանագրվել է նմանատիպ 4-10 դեպք, և 0.33%-ում՝ 11-ից ավել դեպք:

Արձանագրվել է այլ անձի փոխարեն կամ բազմակի քվեարկության փորձի 2 դեպք:

Եղել են զգալի քանակով դեպքեր, երբ քվեարկության գաղտնիությունը խախտվել է, ընդ որում՝ տեղամասերի 3.33%-ում եղել է միտումնավոր խախտում: Տեղամասերի 15%-ում նկատվել է բաց քվեարկության 1-3 դեպք, 3.67%-ում՝ 4-10 դեպք, և 0.67%-ում՝ 11-ից ավել դեպք: Ընտանիքով քվեարկելը շարունակում է տարածված պրակտիկա մնալ: Տեղամասերի 23.67%-ում դիտվել է 1-3, 7.33%-ում՝ 4-10 և 2.67%-ում՝ 11 կամ ավել ընտանիքով քվեարկության դեպք:

Ուղղորդված քվեարկություն դիտարկվել է տեղամասերի 8%-ում: 4.67%-ում նկատվել է ընտրողների կազմակերպված տեղափոխում ընտրատեղամաս:

Ընտրողին օգնություն ցուցաբերելու ընթացակարգի խախտումներ արձանագրվել են տեղամասերի 4.67%-ում (1-ից ավել):

Տեղամասերի 2.67%-ը փակվել է ժամանակից շուտ, 94%-ը փակվել է ժամանակին, իսկ 3.33%-ը՝ 20:01-20:10-ին:

Արդյունքների ամփոփում

Տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքն, ընդհանուր առմամբ, համապատասխանել է օրենքով սահմանված գործընթացներին. միայն տեղամասերի 1.69%-ում են եղել ամփոփման ընթացակարգի խախտումներ, իսկ հաշվարկի ընթացակարգի խախտումներ գրանցվել են տեղամասերի 2.03%-ում:

Ընտրատեղամասերի 93.92%-ում արդյունքների ամփոփման փուլի մասնակիցներին տրամադրվել է արձանագրության քաղվածք: Տեղամասերից 1.01%-ում հաշվարկի ընթացքում ներկա են եղել կողմնակի անձինք: Մի շարք տեղամասեր հոսանքազրկվել են, սակայն, ըստ դիտորդների, դա չի խոչընդոտել արդյունքների ամփոփման և հաշվարկի սահմանված գործընթացը:

Էական խախտումներ

Քվեարկության օրը դիտորդները հաղորդել են մի շարք էական համարվող խախտումներ, որոնց հիմնական խմբերը ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Քվեարկության և արդյունքների ամփոփման փուլում «Ականատեսն» արձանագրել է 93 էական խախտում, որոնք դեռևս շարունակում են ստուգվել:

Խախտման տեսակը	Խախտումների թիվը
Դիտորդի իրավունքների խոչընդոտում	8
Կողմնակի անձանց ներկայություն	15
Չհրկիզվող պահարանի հետ կապված խնդիրներ	6
Բռնություն, սպառնալիք կամ ճնշում գործադրելու դեպքեր	3
Կրկնակի կամ այլ անձի փոխարեն քվեարկության փորձ	3
Օգնության կարգի խախտում	2
Բաց, վերահսկվող և ուղղորդված քվեարկություն	30
Քվեաթերթիկների միտումնավոր վնասում	1
Արդյունքների ամփոփման ընթացակարգերի խախտումներ	3
Գրանցամատյանում գնահատականը գրանցելու մերժում տեղամասային հանձնաժողովի կողմից	22

Արդյունքների կանխատեսումը և մասնակցության ցուցանիշներն ըստ ԶԶՀ-ի

Ստորև բերված են ԶԶՀ համաձայն ստացված տվյալները յուրաքանչյուր մասնակից կուսակցության կամ կուսակցության դաշինքի համար: Այս միջակայքերը որոշվում են ԶԶՀ գնահատումների և սխալի մեծության հիման վրա՝ 95% վստահության միջակայքով:

Կուսակցության անվանում	Քվեների տոկոս	Սխալի մեծություն	Միջակայք
«Արդար Հայաստան» կուսակցություն	0.33%	0.08%	0.3% to 0.4%
«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	1.49%	0.15%	1.3% to 1.6%
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	54.04%	1.87%	52.2% to 55.9%
«Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	0.33%	0.05%	0.3% to 0.4%
«Ազատություն» կուսակցություն	0.13%	0.02%	0.1% to 0.2%
«Պատիվ ունեմ» դաշինք	5.34%	0.66%	4.7% to 6%
«Միասնական Հայրենիք» կուսակցություն	0.06%	0%	0% to 0.1%
Համահայկական ազգային պետականություն (ՀԱՊ) կուսակցություն	0.07%	0%	0.1% to 0.1%
«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	1.14%	0.13%	1% to 1.3%
«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն	1.04%	0.16%	0.9% to 1.2%

«Հանրապետություն» կուսակցություն	3.00%	0.31%	2.7% to 3.3%
«Հայոց Հայրենիք» կուսակցություն	1.04%	0.11%	0.9% to 1.1%
«Ազատ Հայրենիք» դաշինք	0.32%	0.05%	0.3% to 0.4%
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	3.89%	0.58%	3.3% to 4.5%
Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	0.36%	0.05%	0.3% to 0.4%
«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն	1.25%	0.12%	1.1% to 1.4%
«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	0.33%	0.05%	0.3% to 0.4%
«Շիրինյան-Բաբաջանյան» ժողովրդավարների դաշինք	1.39%	0.12%	1.3% to 1.5%
«Ազգային օրակարգ» կուսակցություն	0.07%	0%	0% to 0.1%
«Վերելք» կուսակցություն	0.11%	0%	0.1% to 0.1%
«Ազատական» կուսակցություն	1.20%	0.15%	1% to 1.3%
Հայաստանի եվրոպական կուսակցություն	0.22%	0%	0.2% to 0.3%
«Հայաստան» դաշինք	21.10%	1.29%	19.8% to 22.4%
«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն	1.41%	0.14%	1.3% to 1.5%
«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	0.32%	0.05%	0.3% to 0.4%

ԶԶՀ կանխատեսումը վերջնական մասնակցության համար՝ 49.3% է՝ +/- 0.9% սխալի սահմանով: Անվավեր ճանաչված քվեաթերթիկները 0.38% են՝ սխալի +/- 0.05% սխալի սահմանով:

Տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը

«Ականատեսն» իրականացրել է 33 տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքների դիտարկում: Քվեարկության արդյունքների աղյուսակավորման գործընթացն ընթացել է սահուն: Դիտորդները հաղորդել են որոշ խախտումների մասին, որոնք ստուգման ընթացքում են:

«Ականատես» նախաձեռնությունը շարունակում է կարճաժամկետ դիտորդներից ստացված տվյալների ճշգրտումը ԶԶՀ նպատակով, ինչպես նաև դիտարկումները Տարածքային ընտրական հանձնաժողովներում: Էական խախտումներից առավել առանցքային դրվագների վերաբերյալ նախապատրաստվում են դիմումներ, բողոքներ և հաղորդումներ ընտրական հանձնաժողովներին և իրավապահ մարմիններին:

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնվել է 2018թ.ին Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության, «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» (ԺԱԱ) հասարակական կազմակերպության, «Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամի և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի կողմից:

2021 թ. հունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների դիտորդական առաքելությունն իրականացվում է Եվրոպական Միության, Ժողովրդավարության ազգային հիմնադրամի, Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի, ԱՄՆ գերմանական Մարշալի հիմնադրամի Սևծովյան համագործակցության հիմնադրամի, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության և Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական աջակցությամբ: Ձայների զուգահեռ հաշվարկն իրականացվում է Ազգային ժողովրդավարական ինստիտուտի տեխնիկական աջակցությամբ:

Սույն փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է «Ականատես» դիտորդական առաքելությունը ու դրա անդամ կազմակերպությունները, և այն չի արտացոլում դրամաշնորհատուների տեսակետները: